

J. Kybene

Officer-in-Charge
Zurich

88

891.99 D9
3-18

542.05

5-17

ԳՈՒՐԳԻՆ ԷԴԻԼԵԱՆ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Շ Ա Ն Թ Ի

Վագարեապատ

Ելեքտրաշարժ Տպարան Մ. Աթոռոյ

1913

251.99.09

4-17

EPOS -6 NOV 2011

51.99.00

ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼԵԱՆ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

ՇԱՆ ԹԻ

46.00



մ ա դ ա ր է մ պ ա ս

Ելեքտրաշարժ Տպարան Մ. Աթոռոյ

1913

ՃԱՆԹ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Մեր գրականութիւնը չտեսնուած օրեր է ասլրում այժմ։ Վերջերս լոյս տեսած Շանթի «Հին Աստուածներ» դրաման հասարակական և գրական իր նմանը չեղած աղմուկ հանեց։ Այդ պիեսան քննադատում է մամուլի, հրապարակական դասախոսութիւնների, երեկոյթների, գրական դատերի միջոցաւ։ ոմանք պաշտպանում են, ոմանք ոչնչացնել ցանկանում գեղարուեստական այդ գործը։ Հասարակական լայն խաւերը իրենց հետաքրքրութեան ապացոյցներն են տալիս պիեսայի երկու ամսուայ մէջ վեց անգամ տեղի ունեցող ներկայացումներին ամբողջ թատրոնը լցնելով։ Հայոց թատրոնը և գրականութիւնը այսպիսի օրեր չեն տեսնել երբէք։

Ենթագրելով, որ այս պիեսայի բովանդակութիւնը ծանօթ է հասարակութեան, անցնում ենք տիպերին, աշխարհահայեացքներին և այլ հարցերին վերաբերող գրական և բացասական արժէք ունեցող գնահատութիւններին։ Պիեսայի երկու դլմաւոր հերոսների մտածողական սիստեմը գնահատման ենք ենթարկել առաջնորդուելով ոչ միայն այն տեսակէտից, որ կարելի է և նոյն իսկ յաճախ շատ անհրաժեշտ է գեղարուեստական գրքերի զարգացուած մտքերը քննադատութեան ենթարկել, այլ նաև այն հիմամբ, որ Շանթի այս երկը հասարակութեան, գրական քննադատութեան և դատերի միջոցաւ այդ կողմից առանձնապէս քննութեան առնուեց։

ժամերով նստել է նրա կողքին և յատակադին նայելով՝ քաղցր երազներ ունեցել: Ընթերցողը ակամայից տրամադրում է ընդունել, որ այդ մարդը այդ բռակներին ոչ թէ եկեղեցու շնչքի մասին պէտք է որ մտածած լինէր, այլ այն կնոջ, որը իր մօտ նստած իր մէջ եղած սիրոյ կայձերն էր բոլըքում:

Ի՞նչպէս հաշտեցնել այս դրութիւնը առաջին վիճակի հետ. չէ որ նա ոգերուած և խորին անկեղծութեամբ աշխարհի, զգացումների և բնազդների գէմ էր խօսում, խաչի էութիւնն էր բացատրում. միթէ անկեղծ չէր նա, միթէ նրա լեզուն չէր խօսում այն, ինչ կար իր սրտի մէջ: Ուրեմն իր սրտի մի անկեւնում տեղ էր տուել սիրոյ զգացմանը, հաշտուել էր այդ դրութեան հետ, իսկ ուրիշներին ասում էր, որ այդ բանը պէտք է սրտից հանել Պիեսայի ընթացքում Վանահօրը իրեւ անկեղծ մի անձնաւորութիւնը է պատկերացրած. այս աններդաշնակութիւնը չպէտք է լինէր, որպէս զի տիպի ամբողջացումը և նրա հոգու մասին ստացուելիք պատկերացումը ներդաշնակ լինէր: Հեղենակը ցանկացել է իր հերկու տիպերի մէջ պատկերացնել մարդու հոգու մէջ գոյութիւն ունեցող երկու կողմերին զգայականի և հոգեկան բարձրի կուրքը: Այս մտքի ներկայութիւնը երկում է նաև Վանահօր հոգեկանի նկարագրի ժամանակ, սակայն այստեղ պարզորշ չի զարդացրած հոգու այդ երկու դրութիւնների իրար գէմ ունեցած պայքարը: Զգայականը այնքան թոյլ է արտայայտած Վանահօր մէջ, որ այն տպաւութիւնը չի թողնում, թէ հոգու այդ չնչին ուժը կարող է մրցութեան ելնել Վանահօր վերացական իրէաների սիստեմի գէմ, թէ ենդինակը ցանկացել է Վանահօր հոգու մէջ ևս դուալիզմ գնել: Վանահօր հոգու թէ այդ դուալիզմը և թէ վերելքը շատ յաջող չի տուած, ուստի և ստացուելիք տպաւորութիւնը մասամբ թուլանում է:

Իշխանուհու հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ Վանահօր հոգին մէծ փոփոխութեան է ենթարկում: Նա սիրում էր այդ կնոջը ծածուկ իր սրտի մէջ, երբ այդ մասին առաջին անգամ խօսք եղաւ, նա սարսափեց և հրաժարուեց պատասխանել այդ զգացմանը: Երբ իշխանուհին կտրուկ խօսքերով նրան նեղն էր ձգել, սպասում ես, անա կիսուտիվանուի և կզիջի, բայց երկում է ձերմակաւորը և յիշեցնում իրենց հին խօսակցութիւնը. որանից յետոյ Վանահայրը կտրուկ մերժում է իշխանուհու սէրը: Այդ ներքին տատանումները, ներքին կոփւը և յօփուտ կրօնականի վճիռը աւելի սելիք պէտք է կատարուի և պատկերացուի ընթերցողի առաջ: Այդ տեսարանից յետոյ մենք գտնում ենք նրան արդէն մի այլ նոր շըն շանում. եկեղեցին պէտք է քանդել և նոր ձեր եկեղեցի շինել հոգու մէջ: Ի՞նչպէս անցաւ Վանահայրը այդտեղ, հոգու որպիսի տա-

ռապանըներով, անկումներով ու վերկըներով, մեղ համար չի պարզուում: Թւում է, որ հոգեկան վերլուծութիւներ սիրող անհատը հէնց պէտք է հետաքրքրութիւն հոգու այդ կրիզիսի նկարագրութեամբ, որովհետեւ հէնց դրամատիզմը այդտեղ է արտայայտում: Հեղինակը մեղ տալիս է, թէ այս նոր շընանում ինչ եղակացութեան է հասել նա, ինչ նոր բան է քարոզում, սակայն չի տալիս հոգեկան անցումները և այդ անցումների ժամանակ անհատի հոգու արտաքին վարագոյրի ետեր տեղի ունեցող հոգեկան տառապանըները: Հէնց այդ պատճառով Վանահայրը շատ ուժեղ չի աղդում ընթերցողի վրայ:

Արեղայի, ճգնաւորի և Սեղայի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ ընթերցողը տրամադրում է ընդունելու, որ սէրն է այն անմիջական—ոէալ ապրումը, որի միջոցաւ կարելի է սկեպտիզմի գրկից ազատուել: Արեղան սիրոյ մասին իր սրտի զեղութիւները յայտնելուց յետոյ, էլի մեռմ է այնպիսի մի երազական վիճակի մէջ, որը յատուկ է պարսկական միստիկ բանաստեղծներին. արթուն և երազական վիճակները չի կարողանում իրարից տարբերել և այդ ուղղութեամբ այնքան է ոգերուում, որ մտածում է լրջօրէն, որ գուցէ մարդը ժայռի վրայ բուսած մի սունկ է, որը քնի մէջ երազում է, թէ ինքը վանական է և եկել է սունկ հաւաքելու: Այս տարտամ, անկայուն վիճակի մէջ էլ փակում է այդ տեսարանը: Եկող գէպերի ժամանակ Արեղայն նորից եռանգուստ է գէպի իրական կեանքը մղւում, սակայն ընթերցողի համար բոլորովին չի պարզուում, թէ նա ինչպէս գուրս եկաւ այն ծանր երազական վիճակից, որի մէջ տապակում էր: Հոգեկան անցումները թերի և անկատար են և թոփչքներով կատարած, որը խանգարում է հոգեկան կեանքի զարգացման յաջորդականութեան պարզ ըմբռնմանը: Կամ անհրաժեշտ չէր, որ Արեղայի երազականութիւնը այդքան ուժեղ կերպով զարգացած արտայայտուէր, կամ եթէ այդպէս է հարկաւոր եղել անցումները աւելի պարզ պէտք է լինէն:

Յաջորդ տեսարանների ընթացքում սիրոյ զգացումներից Արեղան անցում է կոռու, յաղթանակի, անզիջողութեան, Նիտշէական գերմարդու լիդէաներին. ինչնու, ի՞նչպէս, ո՞րտեղից տեղի ունեցաւ անցումը. ի՞նչպէս նա մի ապրումից անցաւ բնականօրէն միստին՝ այդ չի պարզուում ընթերցողի համար: Հեղինակը օգտում է սիմբոլի ըմբռնման իր իւրայատուկ եղանակից. պատկերները իրար կողք-կողքի է դնում. երբեմն մէկից միւսին անցնելը լինում է բնական, օր. սկեպտիզմից դէպի երազի փիլիսոփայութիւնը, իսկ երբեմն աններդաշնակ:

Իր սպատակներին համար հեղինակը Արեղային

մշտական երազանքների ու զառանցանքների մէջ է պատկերացնում: Ընթերցողը հեշտութեամբ այն եզրակացութեան գալ կարող է, որ Արեղան նոգեկան մի հիւանդոտ անձնաւորութիւն է, որովհետեւ նրա բոլոր արարքները, տառապանքները, ցանկութիւնները կապուած են լինում զանազան հալուցինացիաների հետ: Շատերը քննազատներից պնդում են, որ Արեղան հիւանդոտ էր և այդ հիմունքից էլ պէտք է բացատրել նրա արարքները և մըտքերը:

Անկասկած հեղինակը այդպիսի մտադրութիւն չի ունեցել: Նրա համար Արեղան մի նորմալ, առողջ երիտասարդ է, այն բոլոր դէպքերը, որ տեղի են ունենում նրա հետ, իսկապէս նրա մըտքերը, երարքները, հոգու պատկերացումներն են, որը հեղինակը առարկայած է տալիս, որպէս զի այդ անբնական եղանակով ընթերցողին վերահասու դարձնէ Արեղայի ներքին կեանքին: Սակայն այն եղանակը, որը նա ընտրել է, խնդրի այնպիսի յաջող ձևակերպումն չէ, որպէս զի ընթերցողների համար միաձև նշանակութիւն ունենայ: Եթէ գրականագէտներից ոմանք այդպէս սխալ են ըմբռնում սիմբոլիկ պատկերների այդ շարաները և սխալ գնահատութիւններ տալիս, ալլա հասարակ ընթերցողների համար աւելի ևս թիւրիմացութեան դռներ կարող է բանալ այդ ձևակերպումը:

Բայց ինչո՞ւ է հեղինակը Արեղային տեսիլքների մէջ դուրս բերել: Ինչո՞ւ նա կարծես մի մշտական տաքութեան մէջ հզող անձն է պատկերացնում Արեղային: Շատ պարզ է: Արեղայի շուրջը գործողութիւն, իրական ոէալ ապրումները չկան: Վանահայրը մի քնական տիպ է, նրա արարքները, մտածումները, ներքին աշխատանքները բնական ձևերով տեղի են ունենում ընթերցողի առաջ, որը զգում է, որ իր գէմ մի իրական տիպ է ապրում: Արեղայի համար հեղինակը չի կարողացել այդ ոէալ կեանքը ստեղծել: Նրա կողքին չկայ իրական Սեղան, ինչպէս իշխանութիւն վանահօր մօտ, որի հետ նա ունենար ոէալ, բնական հաղորդակցութիւն հոգու, ցանկութիւնների և ձգտումների: Այս գէպքում թիւրիմացութիւնների տեղիք չէր կարող տալ Արեղայի անձնաւորութիւնը, նա դուրս կըքար վանահօր հակապատկերը բնականորեն այլ ապրումներով: Ի՞նչը կիսանգարէր, պիեսայի հիմնական իդէան ինչո՞վ կփառուէր, օր. Եթէ Սեղան իրեն մի ոէալ, իրական աղջիկ պատկերանար, որը մնար կղզու վրայ որոշ օրեր, լինէր տեսակցութիւններ Արեղայի և նրա մէջ, լինէր իրական սիրոյ ապրումներ, կարծիքների փոխանակութիւններ և այլն: Այս նկարագիրներից յետոյ էլի կարող էր հեղինակը Սեղանայ կղզին լցնել Արեղայի երևակայութեան համար իրական միգանուշներով, հովիկներով, Սեղայի պատկե-

ըացմամբ: Հեղինակին յաջողուել է վանահօր տիպի համար իրական ֆռն ստեղծել, իսկ Արեղայի համար այդ բանը տեղի չի ունեցել: Նա չի կարողացել մի ոէալ կեանքի շուրջը մշակել երկու տիպերի ապրումները և բաղիսութիւնը: Ֆոնի այդ բացակայութեան պատճառով Արեղան դարձել է վիզիոնէր, հիւանդոտ, զգայարանքները ծայրայեցրէն գրառուած մի անձնաւորութիւն, որը երազում է, բայց չի ապրում իրականորէն: Արեղան, կարծես, ինքը չէ ապրում, ինքը չէ մտածում, այլ գէպքերը գալիս են և նրան իրանց հետ քաշտավոր կայութիւնը նմանում է տաքութիւն ունեցողի թուշքներին, որոնք չեն ենթարկում ընտրող և սահմանների մէջ պահող ու վերահսկող գիտակցական եսին և բանական կամ կամքին:

Այս երկու տիպերի հոգեկան զարգացումը, գիտակցութեան յորձանքը ընդհանրապէս յաջող չէ տարած: Հեղինակը յաճախ վարպետութեամբ նկարագրում է հոգեկան կեանքի վայրկեանները հատիկ-հատիկ տեսարանների մէջ, սովորյան այդ տեսարանների ներքին ձուլուածքը և անցումները նոյն յաջողութեամբ չի կատարում: Հոգեկան կեանքով հետաքրքրուող մի պիեսայի համար գա արգէն զգալի պակասութիւն է: Հեղինակը անպայման հոգեկան կեանք դիտելու կարողութիւն ունի, սակայն իր այդ ընդունակութիւնը գեռ լիակատար ծաղկած վիճակում չի ներկայացրել այս պիեսայի մէջ:

Որոշ չափի թուլանում է ներուների ազգեցութիւնը ընթերցողի վրայ նաև այն պատճառով, որ այդ տիպերը զանազան բացարութիւնների առիթ են դառնում: Նրանց մի վարմունքը ընթերցողը չի կարողանաւ միակերպ բացատրել. պիեսայի զանազան տեղերը յօդիւտ տարբեր ենթարկութիւնների ապացոյցներ են ծառայում և այդպիսով նրան թիւրիմացութիւնների մէջ ձգում: Ամեն մի զեղարուեստական երկ պէտք է պարզ, որոշ և առանց մութ կամ հակասական ենթարկանների ազգէ ընթերցողի վրայ, այլապէս կիթուլացնէ իր ազգեցութիւնը: Հին Աստուածները մի այնպիսի փիլիսոփայական զեղարուեստական խորը գրուածք չէ, որպէս զի արդարացնելու հարաւորութիւն ստեղծուի փիլիսոփայական խորութիւնը պատճառ քոնելով: Հին Աստուածները աչքի է ընկնում ընդհանրակառակն փիլիսոփայական իր անսահման պարզութեամբ: Իսկ այդպիսի երկը մանաւանդ տիպերի պարզ և առանց բազմազան բացատրութիւնների տեղիք տալու հանգամանքով պէտք է ազգէ ընթերցողի վրայ: Այս պիեսայի շուրջը մեր գրականապահեան մէջ տեղի ունեցող բազմազան վէճերի գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ գրուածքի հերոսները բազմակերպ բացատրելի կողմեր ունին:

Մի քանի խօսք էլ ձերմակաւորի սիմբոլի մասին։ Առաջին տեսարանը բացւում է նրա և Վանահօր խօսակցութեամբ։ թւում է, որ այդ տեսարանը միանգամայն աւելորդ է և ոչինչ չի աւելացնում ընդհանուր ընթացքի վրայ։ այդ տեսարանը մի տեսակ մեծ ափիշայի տպաւորութիւն է թողնում, որը յայտնում է բաւականին թոյլ կերպով, թէ թատրոնի ներսում ինչ բան պէտք է կատարուէ։ Այդ տեսարանը կարող է վերացուել բոլորովին։ ինքը դրաման, ինքը գործողութիւնը պէտք է ցոյց տայ ձերմակաւորի և Վանահօր կոսուի բովանդակութիւնը և ոչ թէ այդ նախարանը, որը ընթերցողին ոչ լարում է ապագայի համար և ոչ էլ սերտօրէն կաշում ընդհանուրի հետ։

Բնաւորութեան հիմնական տարրերից մէկն է նաև մարդու համոզումները, իդէալները, աշխարհաճայիցքը։ Վանահայրը և Արեգան մանաւանդ այս խնդրում տարրեր մարդիկ են։

Վանահօր աշխարհաճայիցքի հիմունքները հետեւալներն են։ Աստծու տաճարի մէջ թագաւորում է միայն հոգին և նրա շունչը։ Զարը, անբարոյականը հիմնում է բնազդների և մարմնականի վրայ։ Այս մարդը, որ տիբապետել է իր մարմնին և բնազդներին, նրա համար չարը գոյութիւն չունի, մանաւանդ եթէ իր շղթաները աշխարհի, իր անցեալի, իր յուշերի, վշտերի և ուրախութիւնների հետ կորել է արդէն։ Վանահայրը արհամարհում է աշխարհը և նրա յատկանիշները, սակայն զիջում է նրա գոյութեան իրաւունքը որոշ կարգի մարդոց համար ասելով։ «Ով մարդ է և միայն մարդ՝ անիկա աշխարհին է և թող դառնա աշխարհին»։

Վանահօր իդէալական մարդու տիբապ պէտք է «վեր ըլլա, քան մարդը»։ Այդ գերմարդը բնութիւն տուեալներից չի կազմակերպում իր կեանքը։ Նա չի շարունակում բնութիւն տուեալները, այլ ներքին խորասուզութիւնների, մտքի տիբապետութիւնների միջոցաւ իր մէջ մի նոր էութիւն է ստեղծագրութում, որը շատ կողմերով նոյն իսկ դէմ պէտք է լինի բնական տուեալին։ Այս իդէալական վիճակի հոգու մէջ չկան «Լրոքեր», «բնապիներ», այլ միայն սուրբ հոգին, միայն դէպի ճշմարիտը, դէպի Աստուածը վեր խոյացող միաբը։ Այս բոլորը Վանահօր այն հայեացըներն են, որ ունէր իշխանութու հետ ունեցած բացաւորութիւնից առաջ։

Այդ խօսակցութիւնից յետոյ Վանահայրը ասելի է խորաշում, միակողմանի դառնում վերոյիշեալ մտածումների մէջ։ Պէտք է նոր եկեղեցի շինել, սակայն ոչ թէ քարերից, ինչպէս առաջ էր շինուում, այլ բանականութիւնից, կամքից և հաւատից և որը հոգում

պէտք է տեղաւորուած լինի։ Այդ եկեղեցուն կարելի է համար ներքին անգույ, անկաշկանդ աշխատանքով ու որոնումներով։

Այդ ներքին կատարելագործութիւնը սահման և վերջ չունի։ ոչ մի քրիստոնեայ չի կարող հպարտանալ, թէ իր ներքին եկեղեցու շինուածքը աւարտած է։ քանդելն ու շինելը հիմնական յատկութիւնն է ներքին աշխատանքի։

Այդ ներքին ինքնամփոփման ժամանակ հոգին մի արտասովոր գրութեան մէջ է ընկնում։ նրա համար գոյութիւն չունի ոոչ մէկ արտաքին յուզում, ոչ մէկ արտաքին աղմուկ», այնտեղ արկի ու աշխարհիկ կեանք չկայ։

Ինչպէս հասցնել մարդուն այդ վիճակին։ Վանահայրը այն համոզմանն է, որ մարդուն չի կարելի հասցնել այնտեղ։ մինչև իր կեանքի առաջին շրջանը կարելի է մարդուն օգնել հասնելու, բայց «հոսկէ անդին մարդ ինքը պիտի երթաց», երբ մարդը ուղում է իրենից վեր լինել և կտրուել բնութիւնից և հոգին մի ուղղութեամբ զարգացնելով սուզուել Աստծու էութեան մէջ, այնտեղ արդէն ուրիշը, «դուն» չպէտք է խառնուէ։ այդ սրբութիւն սրբոցը մաքուր պէտք է մնայ ամին մի արտաքին միջամտութիւնից, որը նոյն իսկ այդ գէպքում անօգուտ է։ Վանահայրը դառնում է մի մեծ անհատամուլ։

Այսպիսով հոգին մի արտասովոր լարուած վիճակի է հասնում։ Մարդու ողջ էութիւնը բաժանուում է երկու հիմնական մասերի—զգայականի և աղատ հոգեկան կեանքի։ Առաջինը ենթարկուում է արհամարհանքի, իսկ երկրորդը ոգևորութեան առարկայ է գառնում։ Սակայն հէնց այս մասը միակողմանի ըմբռնման և գնահատման է ենթարկուում։ հոգեկան ասելով Վանահայրը ըմբռնում էր նրա որոշ կողմը միայն—զուտ կրօնական աշխատանքը։ Արտաքին բնութիւնը, այլ մարդիկ, անհատի պարտականութեան գիտակցութիւնը գէպի շրջապատը ոչնչացման է ենթարկուում։

Վանահօր փիլիսոփայութիւնը միակողմանի է։ Վանահօր փիլիսոփայութիւնը գնահատելի է այն կողմից, որ այնտեղ ուշագրութեան է առնուում հոգու ներքին կեանքը, խորն ապրումները, զրութեան է առնուում հոգեկան աշխատանքը։ Զգայականութեան դիմաց զնում է ներքին հոգեկան արժէքների, հոգու ներքին կատարելագործութեան խնդիրը։ միմիայն զգայականութեամբ հոգին չի կարող երկար շինուալ բաւարարուած ավրել։ Այս գնահատելի կողմի հետ այդ ժամանակ բաւարարուած ունի շատ պակասաւոր մի կողմ։ արտաքին փիլիսոփայութիւնը ունի շատ պակասաւոր մարմնի կարիքները, մարմնի կարիքները, մարդու իրական-բնական կեանքի գնահատելիութիւնը ոչնչացման է ենթարկուում։ Ինչպէս անհատ գնահատելիութիւնը գնահատելի կեանքը բաւարարուելը, նոյնպէս և անհատ զուտ զգայական կեանքը բաւարարուելը, միմիայն ներքին խորասուզումներով մշտապէս կերակրել մար-

գու մարմնի մէջ լուծուած հոգին։ Ճնշել, ոչնչացնել զգայարանականը, նշանակում է ոչնչացնել նաև հոգու բարձր կեանքի երեսլթները։ Այսպիսի մի վտանգ անպայման գոյութիւն ունի Վանահօր փիլիսոփայութեան մէջ։

Վանահօր զուտ հոգեկանի փիլիսոփայութիւնը պակասաւոր է նաև այն կողմից, որ ներքին խորասուզումներ առելով հասկանում է միմիայն անհատի յարաբերութիւնը Աստծու հետ, ևսի ձուլումը գերբնականի հետ։ Մետափիզիկ խնդիրների կարիքը որքան էլ ամեն մի անհատի համար անհրաժեշտ կարող է նկատուել, սակայն նա հոգեկան միակ կարիքը չէ, ներքին խորասուզումներ կարող են համարուել նաև գեղեցկութեան, անհատական կեանքի այլ և այլ վիճակների, սացիալական խնդիրի, գիտական հարցերի մասին եղած հոգեկան գաղտնի աշխատանքները։

Վանահօր փիլիսոփայութիւնը աշխարհիկ չէ ըստ իր բովանդակութեան և մանաւանդ ըստ իր հետեւանքի, որովհետեւ այդ աշխարհանայեացքից զրգուած նաստիպուած խոյս է տալիս կեանքից յօդուած անհատական աղապութեան Ճիշտ է այն կարծիքը, ըստ որի մարդը միշտ էլ համայնքի մէջ չպէտք է կատարէ իր հոգու կատարելազորման ակտերը, այլ նրա համար որոշ բաներ պէտք է ներքին մասնաւոր սեպհականութեան ապացոյցներ ծառայեն, սակայն այդ զուտ անհատական ներքին աշխատանքի և արժէքների հանգամանքը չպէտք է առիթ դառնայ ծայրայեղ անհատականացման և ինքնամփոփման, ինչպէս այդ տեղի է ունենում Վանահօր մօտ։

Վանահօր փիլիսոփայութիւնը միակողմանի լինելուց զատ անորոշ է և թերի նա մի քանի անգամ է պարզում իր ծրագիրը, սակայն այդ պարզաբանումներից շատ բան չի լուսաբանուում։ Նա ասում է, որ մարդը մենակ պէտք է աշխատէ իր ներքին եկեղեցու կառուցուածքի համար և իր գլխաւոր ուշը դարձնէ դէպի անդրբնականը, սակայն չի պարզում, թէ ինչ է ներկայացնում այդ անդրբնականը, ինչպէս է նա արտայայտում մարդու հոգու մէջ, ինչ յատկութիւններ ունի այդ վերինը և ճշմարիտը։ Վանահայրը խօսում է հոգու մի քանի դրութիւնների մասին առանց պարզաբանելու նրանց էռութիւնը կազմող կոնկրետ պատկերացումների, որակների յատկանիշները։ Առ արդէն մէծ պակասութիւն է, որը խանգարում է Վանահօր տիպը և էռութիւնը լաւ հասկանալու գործինու Վանահօր պէս կրօնական տրամադրուած անհատներն անգամ չեն կարող նրան իդէալ դարձնել, իր դէպի անորոշը ու միստիքականը գնացող մութ տրամադրութիւնների և ըմբնումների պատճառով։

Վանահայրը քրիստոնեայ է իսկական մտքով և ոչ իր վեր-

ջին շրջանում մօտենում է մի քանի խնդիրներում իսկական քրիստոնէական տեսակէտին։ Բարոյականի մէջ զնահատում է մատիւները, գործողութեան շարժառիթները, քան գործողութեան հետեւանքների օգտակարութիւնը։ Մեծածախս եկեղեցին արդէն պատրաստ է և լաւ պայմանների մէջ գրուած, սակայն Վանահայրը ցանկանում է ոչնչացնել այդ որովհետեւ շինութեան յառաջացման պայմանը, շարժառիթը իր հասկացողութամբ եղել է անբարոյականը, անմաքուրը, Գործի մոտիւն է խնդիրը։ Նա պէտք է ըլլիէ բարոյական գիտակցութիւնից։ Այս տեսակէտը զուտ քրիստոնէական է։

Վանահայրը մի այլ խնդրում ևս զուտ քրիստոնէականին է մօտենում։ Նա քարոզում է, որ անհատը իր հոգու մէջ անկախօրէն կերտէ իր հաւատքի կայարան—եկեղեցին, ինքը անկախօրէն աշխատէ իր ինքնակատարելազործութեան համար և անմիջօրէն յարագերութեան մէջ մտնէ իր Աստծու հետ։ Քրիստոսի ուսմունքի մէջ այս տրամադրութիւնը անպայման գոյութիւն է ունեցել և ունի։

Վանահօր բացարձակ ինդիւիդուալիզմը, այլ անհատներին բարյա—կրօնական կատարելազործութեան կիսաճանապարհին թողնելը, իր հետից գուրա այլ աշխարհ չճանաչելը, գծուար թէ անպայմանօրէն բգնէ բուն քրիստոնէութեան էութիւնից։ Վանահայրը քրիստոնէական իգէանների այն միակողմանի ըմբուման ներկայացքիցին է, որը իր տիպիկ արտայայտութիւնը դատաւ միջին դարերում։ Զպէտք է մոռանալ յիշելու նաև այն, որ ճգնական, աշխարհը արհամարհնելու և նրանից խօսամիևու. և ինքն իր մէջ առզուելու տրամադրութեան համար քրիստոնէութեան մէջ որոշ տուեալներ կային, այլապէս անհատ է պնդել, թէ միջնադարեան կրօնական և զնական ըմբումունիերը բացարձակօրէն պիտանքի և թիւրիմացութիւնների վրաց էր հիմնուած։

Վանահայրը իսկապէս մեր ներկայ կեանքից վերցրած մի բնական տիպ չէ, նրա համոզութենքից տրամադրութիւնն որի, կրօնական ըմբումունիերի ներկայացքիներ մեր կեանքում շատ քիչ կան։ Սյստեմ-այնտեղ պատահում են որոշ կողմերից Վանահօրը փոքր չափերով մօտեցող անհատներ, սակայն այլպիսի լիսկատար ծաղկման հասած տիպեր չափ կան այժմ։ Կրօնական հարցը մեր ժամանակում գտնարկել է այն միստիկական չրջանները մացնելուց, ինչպիս վանահօր մօտ, ներկայի կրօնական տեսակէտից ամենաամանպայմական մտածողն աղայացների, մարմնական պահանջների և արտաքին բնութեան արժեքաւորման մասին չունի պահանջների և արտաքին բնութեան արժաքիները, ինչ ունի Վանահայրը։ Վանահայրը իր հոգեկան որակային կազմով դադարել է այժմ համարեա գոյութիւն

ունենալուց, ուստի և նա ժամանակակից ոէտ և կատարեալ մի տիպ է:

Ժամանակակից տիպ չլինելով սակայն նա պատմական տիպ է: Միջին դարերի խոկական ներկայացուցիչ մարդը ունէր Վանահօր հոգուց շատ մասեր: Մեր միջնադարեան տիպիկ միտիկ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին Շանթի Վանահօր նախատիպն է:

Զգիտեմ հեղինակը վանահօր տիպը կերտելիս ի նկատի է առել Գրիգոր Նարեկացու հետեւալ խօսքերը, դէպի ուր վերջ ի վերջոյ ձգուում է Վանահայրը. «Հեծեծող սրտիս հառաջանքների ձայնը, ողբերի ազաղակը Քեզ եմ վերընծայում, սրտադէտ Աստուած. և խորտակուած մտքիս ճենճերող իղձերի պառողը՝ թափծութեան կրակով տաշորուող անձովս, առաջնորդ եմ դնում ու կամբիս բուռվառով Քեզ վերառաքում»:

Իսկ Դնւ, Ողորմած Տէր, նայիր նրա վրայ, հոտոտիր այն աւելի՝ քան բարդ-բարդ ծխով Քեզ մատուցուող բոլորապառող պատրագը:

Հաճութեամբ՝ այլ ոչ բարկութեամբ ընդունիր սակաւ խօսքերիս հիւսուածքը. բանական զոհիս յօժարակամ այս նուէրը՝ պարարտ ճարպիս ողջակիզող ուժովը, զգայական խորհուրդներ ունեցող սենեկակիս այն խորութիւնիցը թող ելնի և Քեզ հասնի»:

Ահա մի մարդ, որ զգում է իր բանական անկատարութիւնը. իր զգայական բնոյթը և իր ներքին կեանքի տառապանքները զնում է իր Սուտծու առաջ և անմիջական կերպով կապւում նրա հետ և խնդրում նրան. որ իր սրտի հառաջանքները, իղձերը աւելի ուշադրութեան առնէ, քան սովորական պատարագը. Միթէ նոյնը չէ իր էութեան մէջ Վանահայրը, Վանահօր մօտ զգացումների այնպիսի թափ և խորը անկեղծութիւն չկայ, ինչպէս նարեկացու, որովհետեւ Նարեկացին անկեղծօրէն այդ բոլորը զգացել է, ապրել և արտայայտել, իսկ Վանահօր ստեղծիչ Շանթը այդ ահակի զգացումները չի ապրել անմիջօրէն. այլ միայն իր մտքի մէջ է պատկերացրել պատմական անցեան ու այսուհետեւ կերտել իր հերոսի տիպը, որը զուրու է եկել մի փոքր աւելի թոյլ և մտածական, քան անկեղծ և անմիջական ինչպէս նարեկացին:

Սյս բոլոր հանգամանքները միախառնուելով Վանահօր ազդեցութիւնը թուլացնում են. ընթերցողը չի կարողանում այնպէս սապրել, սեպհականացնել նրա հոգու ելեէջները, ինչպէս Արեղայինը: Վանահայրը մեկ օտար տիպ է. մեզ հետաքրքրում է նա, մտածողական հոգու մէջ է պատկերանում առանց խորը կերպով զգացումների աշխարհի մէջ ձուլուելու:

Արեղայի փիլիսոփայութեան և արժէքների տեսութեան հիմունքները այլ են. նա միանգամից չի հասնում նոր արժէքներից սիստեմին, այլ աստիճանաբար և հոգու երկար տառապանքներից յետոյ. իսկապէս այս բոլորը նա ապրում է և ոչ հանգիստ դոցամասին մտածում և ընտրում: Արեղայի փիլիսոփայութիւնը կարծիացով կարելի է ասել զգայարանքների փիլիսոփայութիւնն է: Հեղինակը որպէս զի իր կենդրոնական տիպերին աւելի բացորդ արտայայտէ, երկսին էլ դնում է իրենց բնոյթին համապատասխան երկու իրար հակապատկեր կեանքի մէջ:

Մարդկութեան մի մասը ապրում է զգայականի և արտաքին աշխարհի փայլի մէջ, ունենալով բարոյականի և աստուածայնի մասին մասին իր ուրոյն, ներկայի մտքով ասած՝ «աշխարհիկ հայեացքները»: Աշխարհիկ կեանքի ծերունին ասում է. «Կեանքը ուրախութեան համար է տուած մեզի», ուստի և որոշում է, թէն ինքը ծեր է, բայց պէտք է ուրախ և գոհ ապրէ կեանքը լիակատար վայելելով:

Միւս կեանքի ներկայացուցիչ ծերունու կարծիքով. «Կեանքը խաչ մըն է, որ պիտի կը ենք մեր ուսին, մինչև աէրը կանչէ մեզի»: Իսկ այդ կեանքի երիտասարդ վանականը պնդում է նոյնը այլ խօսքերով. «Մէյ մը ատոնց (աշխարհի մարդոց) հարցնող ըլլանվ մարդ, ինչ ես գտել այդ ձախողութիւններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարօտութիւններու, այդ կոռւին ու դառնութեան հոգտին մէջ, որուն աշխարհը անունը կու տան: Այդպէս էլ յիմար հաշիւ: Քանի մը խղճուկ վայելքներու, քանի մը չնչին հաճոյքներու համար մարդ առնէ ու զոնէ իր հանգերձեալ կեանքի յաւիտենական երանութիւնը»:

Արեղան վանականների շրջանումն է մեծացել, աշխարհիկ կեանք բոլորովին չի տեսել: Սեղայի հետ պատահածը առիթ է դառնում, որ նա աստիճանաբար անցնէ աշխարհիկ կեանքի պաշտամունքին:

Արեղան իր այդ նոր շրջանում սկսում է սիրել ծովը, ալիքները, յուղումը, աշխարհային կոիւը և սէրը: Իր հոգու մէջ լսում է միգանուշների քաղցր երգը.

«Մէրը սիրով,

սէրը սիրով,

օրէնքն աս է

դարերով»:

Համեմատում է այս երանելի զրութիւնը իր ներկայի հետ և տեսնում, որ ինքը մոմի նման «դժգոյն և մինակ» մխում է ու հալւում:

Սիրոյ զգացումը նոր է արթնանում նրա մէջ, գեռ չի կա-

րողանում իր ողջ էռութեամբ ենթարկուել այդ նոր զգացմանը: Նրա վրայ իջնում է անորոշութեան, յուստահատութեան, տրամադրութիւն, որը շատ սովորական է երիտասարդ սիրահարների մօտ:

Այս ուղղութեամբ զարգանալով քննկում է խոր յունետեպութեան մէջ, աշխարհի բոլոր՝ թէ աշխարհիկ և թէ եկեղեցական արժեքները նրան թւում են ունայն և ոչինչ քաներ (ճգնաւորի տեսարանը): Մի վայրկեան ժխտման փիլիսոփայութիւնը յազթանակում է սիրոյ զգացմանը: Սակայն շուտով երիտասարդական տեմպերամենտը յաղթում է սառը դատողութեան: Տարիքի, զգացումների թափը հնարաւորութիւն է տալիս թուշկու ունայնութեան փոսի վրայից և զալու այն եղբակացութեան, որ հոգու երազական փհակով լիարելի է լցնել այդ փոսը: Եւ ահա յղացման այդ վայրկեանին լսում է երազող երիտասարդութեան օրհները:

«Իշեք, իշեք

երազներ».

իշեք զգուշ

երազներ

շոյող, քնիքուշ

երազներ»:

Աւշադրութեամբ տկանջ դնելով իր ներքին ձայնին, նկատում է, որ երազների երգը Սեղայի սիրոյ երգն է, որ երազը հէջ ինքը ուէրն է: Սէրը մարդու էռութեան հմայքն է, մտքերի թագուշին, սրտի ծովը, հոգու փոթորիկը, ծովերի յոյզըը, արեի հուրքը: Նա մարդու զգայարանքներին բնութիւն է տալիս, սրտին՝ ծովի խորութիւն, կեանքին՝ թոփչքի թե: Նա մի շունչ է, որ մտնում է «տիսուր», «չոր», «մինակ» ապրողների հոգու մէջ և նրանց շարժուն և կենդանի կեանք տալիս: Սէրը կեանքի վեհագոյն երազն է:

Հեռանալով վանական աշխարհանայեացքից Արեղան իր նոր կեանքի համար հոգու ուժեղ տատանումների միջոցաւ երկու իրար հետ միացած արժեքներ է գտնում—սէր և երազ և զրանցով կարողանում է հոգու տառապանքների ժամանակ յառաջացած ունայնութեան փոսը լցնել:

Մհեմանի տեսարանի մէջ Արեղայի փիլիսոփայութիւնը հասնում է իր վախճանին: Կեանքը կոլու է, անողոք, անզիջում կոխ: Յաղթանակը մարդու վհանագոյն արժանիքն է: ով յաղթում է, նա պէտք է հեռու կենայ կեանքի վայելքի սեղանից: Կեանքի կռուի մէջ չպէտք է խնայել, պէտք է զարկել բոլոր դէմ ելնողներին, խնայելը թուլութիւն է, մեղքանալը՝ պարտութիւն: Աշխարհի կեանքը կոուի մէջն է, իսկ նրա վայելքը սիրոյ: Այդ վայելքի հիմնական միջոցներիցն են՝ «առողջ», «ճկուն», «ուժեղ», «քնիքուշ», «հայակապ մարմինը», «գինին», «աբրեցումը», «հեշ-

տանքը»: «գեղեցկութիւնը» և առ հասարակ բնութիւնը մակերպ արտայայտութիւններով:

Այս իմացութիւններից յետոյ ուղում է մղուել դէպի նոր անձանօթներ, նոր աշխարհներ, նոր գոյութեան, նոր ձեռների, նոր էռութեան և նոր կեանքի: Երիտասարդներին յատուկ անորոշնորեր» և իրէալներ:

Արեղան որոշ տեսակէտից կեանքի մի ամրողական, բայց ոչ լիակատար ծրագիր ունի: Այդ նոր կեանքը հիմունքը զգայարանքը. կոնկրետ զրգիւները և պատկերացումներն են: Բոլոր զգայարանքներին և բնազդներին բաւարարութիւն է տրում առանց խտրութեան: Հոգեկան կեանքի վայելքը հիմնում է զգայարանքների տուած տպաւորութիւնների վրայ: Արեղայի սէրը զգայական է, մարմնականի պաշտամունքը հիմնուած է աչքի և շօշափելիքի զգայութիւնների վրայ: Գեղեցկութիւնը աչքի և ականջի տպաւորութիւնների գինին ձաշակելիքի օրգանի. բնութեան պաշտամունքը բոլոր զգայարանքների: Կուրը և յաղթանակը մկանների և կենդանական ուժի: Սա ոչ թէ հոգու, այլ զգայարանքների փիլիսոփայութիւն է:

Հոգեբանական-հասարակական տեսակէտից եթէ գնահատելու լինենք այս հայեացքները, թնչ եղբակացութեան կարող ենք գտալ: Արեղայի աշխարհանայեացքը ծայրայիդ հակապատկերն է Վանահօր մտածումների: Ինչ Վանահայը չէր ուղում: Արեղան տեսչում էր, ինչ մէկը ճնշել էր ուղում, միւալ այդ կողմը միակողմանիօրէն շնչառում էր:

Արեղան զգայական տպաւորութիւններ ու տպաւորութիւններ է պահանջում: գորա սակայն վերջ ի վերջոյ ձանձրոյթ և յոզնածութիւն կարող են յառաջ բերել մարդու մէջ: Պատկերացնենք մի կեանք, ուր մարդիկ խմում են, միշտ ուրախ են, միշտ սիրում են, միշտ զեղեցիկն են տեսնում և հիմնում ձկուն «մարմիններով» և իրենց հաճոյքը միծացնելու և մկանները մարդկուր համար կուռում են: Այս կեանքը լաւազոյնը չի կարելի կոչել, որովհետեւ հոգին չի խորանում և սուզւում իր էռութեան մէջ աւելի բարձր և զուտ հոգեկան կեանքով ապրելու համար: Մշտապէս թափառել զգայական աշխարհի երեսին, մըշտապէս ներքին կեանքը արտաքինը պատկերացնող վիճակում տեսնել, կարող է աստիճանաբար մանրացնել հոգին: Հոգեկանը այդ արտաքին զրգիւններից պէտք է այլ արժեքներ որոնէ և կազմակերպէ, որոնք ամրողովին չեն տրուած արտաքին բնութեան մէջ, սակայն որոնցով կարելի է գնահատել արտաքին բնութիւնը: Ամեն բան վեր ածելով զգայականի և բոպէականի, կեանքը դարձնում ենք մանր և ոչ խոր: Որքան յաճախ անհատը



Ճնշում է իր զգայարանքների ցանկասիրական թափը հոգու մէջ գոյութիւն ունեցող իդէաների հիման վրայ: Կուլտուրայի պատմութիւնից բազմաթիւ փաստեր կարելի է բերել, ցոյց տալու համար, թէ զգայարանքի միակողմանի կուլար որքան կործանար է անհատ մարդու և հասարակութեան համար:

Արեղայի կեանքի իդէալները ոչ միայն միակողմանի, այն նոյն իսկ որոշ կողմից մերժելի էլ են: Արեղան կոիւ և յաղթութիւն է երգում: Ներողամտութիւնը, մեղքանալը թուլութիւն և բնաւորութեան պակասութիւն է համարում: Միեղան հայոց Նիտշէն է: Կեանքը կոիւ է, այդ ճիշտ է: բայց հետաքրքիր է, ներկայ մարդկութեան բարոյական հոսանքների որ՝ տոկոսն է այդ անողոքը, անդիշում կոիւը աստուածացնում: Միթէ խղճալը, օգնական լինելը և ընկերականութեան զգացման վրայ ներդաշնակ գործունէութիւնը և փոխադարձ զիջումները բարոյական տեսակտից այնքան սնանկ դուրս եկան, որ անհնար դարձաւ նոր հորիզոններ որոնող Արեղայի փիլիսոփայութեան մէջ տեղ տալ նրանց: Կոիւը մի յաւիտենական երկոյթ է կենդանականի համար: Նա ազատարար, մաքրող, զտող, մարդուն դէպի վեր բարձրացնող մի յատկութիւն է, որը պէտք է տեղի ունենայ նաև ապագայի հասարակական նոր ձևակերպումների իրականացման ժամանակ: Սակայն չի կարելի մերկ, ինքն իրան թողած և սոցիալական սկզբունքներից ազատագրուած, կենդանական ուժի և մկանների թափի հետ կապուած արարքը այնքան սիրուն լիզուով գովել: Այդ կոիւը մարդավայել ձևերի, կուլտուրակառութեան պէտք է փոխել: Արեղան իր մկանների ուժով վայր գլորեց մի զօրականի և խլեց նրա սուրբ: Բայց միթէ չէր կարող հէնց այդ հասարակութեան մէջ գանուել մէկը աւելի ուժեղ նրանից, որը նոյն վիճակի մէջ ձգէր Արեղային, մի ուրիշն էլ, որը Արեղային յաղթողին յաղթէր և այսպէս անվերջ, մինչև որ մէկը կմնար, որը կլինէր ամենից զօրեղը, ամենից ահարկուն: Բայց չը որ հէնց այդ ժամանակ բոլոր թոյլերը սոցիալական խմբակցութիւն կը կազմէին այդ ուժեղին տապալելու համար: Իսկ այդ ժամանակ բնականօրէն նրանց մէջ կծագէր և կզօրանար ընկերական մորալը: Ահա մի հանգամանք, որը ուշագրութեան չի առել հեղինակը իր հերոսի իդէալները մշակելիս:

Արեղայի փիլիսոփայութիւնը սակայն մի շատ գնահատելի կողմ ունի. նա կտրուկ կերպով շեշտում է զգայարանքների և զգայականի արժէքը անհատական հոգեբանութեան համար, նա փրկում է յունականը միջնադարեան ճգնականութեան ճանկերից: Զգայարանքները երկար դարեր կոռւել են իրենց իրաւունքի համար: շատ դարեր նրանք յաղթուած են եղել Վանահօր ուղղու-

թեան մարդկանցից, եղել են դարեր, երբ նրանք յարութիւն են առել տիտանական թափով, ինչպէս օրինակ վերածնութեան դարում:

Զգայարանականի արժէքը ըմբռնելու համար հարկաւոր է միայն թեթևակի հայեացք ձգել մարդու հոգեկանի վրայ: Հոգու բարձր կեանքը հիմնուած է զգայարանքների վրայ: բարձր տեսակի զգացումները այսպէս թէ այնպէս հիմնուած են զգայարանական զգացումների վրայ: Զգայութիւնները նրբանալով՝ դառնում են գաղափարներ, սկզբունքներ, օրէնքներ և բարոյական պահանջներ: Եթէ վերացնելու լինենք զգայականը, կը կուրանան զաղափարները, ասում է կանար: Զգայութիւնները մեր հոգին պահում են թարմ, գործունեայ, տպաւորուող, կենսուրախ, իսկ նրանցից գուրել լինելը յառաջացնում է հոգու թառամութիւն: Ահա այս է Արեղայի պաշտպանած առողջ սկզբունքը, որը միշտ պէտք է զոյցութիւն ունենայ, քանի մարդկութեան կուլտուրան առողջ է և հիւանդու երկոյթներից ազատ:

Ունի՞ այս խնդիրը այժմէական նշանակութիւն մեր հայկական կեանքի համար, պատասխանը անկասկած դրական է լինելու: Գերմանական գրականութեան մէջ նոյն իսկ յաճախ է ընթերցողը այն կարծիքին հանդիպում, որ ներկայի եւրոպական հասարակական կեանքը թէ հակառակ չէ մարմնականի պահանջներին, սակայն դոքա լիակատար և նուրբ կերպով չեն ապրում այժմ: Նկատում է նոյնպէս, որ եւրոպացիների աչքերը դեռ չեն կարողանում տեսնել արտաքին բնութիւնը և մարդու մարմնի սիրուն ձևերը յոյների պէս: այդ պատճառով էլ կոչ է անւում ուշը դարձնել զգայարանքների նուրբ կրթութեան վրայ:

Եթէ այս կոչը միտք ունի եւրոպական հասարակութեան մէջ, ապա որքան աւելի ևս հարկաւոր է այդ մեր հասարակութեան համար, որի անդամների աչքերը ոչ միայն չնչին տարբերելի, այլ և ակնյայտնի գեղեցկութիւններն անդամ դիտելու կարողութիւնը չունին:

Արտաքին կեանքի վայելքների ձևերը, մարմնական կարիքների իդէալիքացիան սիրուն և օրինակելի կերպով պատկերացրած է Արեղայի տիպի մէջ: Սակայն ափսոս, որ նրան պակասում է հոգու խորութիւնը, բազմակերպութիւնը և զուտ հոգեկան արժէքների գիտակցութիւնը:

Գրական դասերի միջոցաւ հասարակութեան մէջ այն միտքը տարածել թէ Արեղան վնասակար մտքեր է քարոզում, նշանակում է ի նկատի շառնել այն միանգամայն գնահատելի արժէքը, որը Շանթը գեղարուեատական կերպով մեր հասարակութեան առաջն է զնում՝ յունականութեան ոգին: Արեղան աւելի քան

ժամանակակից տիպէ և ոչ այնպիսին, որը դեռ նոր պէտք է մանէ մեր կեանքի մէջ: Արեղայի տիպով մեր նոր կեանքի յաղթանակն է երգուած. մեղնից ամեն մէկի մէջ նստած է Արեղայից մի մեծ կտոր: Դատապարտել Արեղային, նշանակում է դատապարտել մեզ, մեր կուլտուրան և յունականութիւնը: Արեղայի քարոզած արժէքների միծ մասը ընդունելի են ներկայի համար:

Մեր քննադատներից շատերը այն կարծիքին են, որ Արեղան մի այնպիսի էդոյիստ է, ինչպէս Վանահայրը: Այս կարծիքը լիակատար ճշմարտութիւն չունի իր մէջ. երկու տիպերը մի փոքր այդ խնդրում իրարից տարբերուում են: Պիեսայի մէջ չի շեշտուած, որ Արեղան ալտրուիստ է, սակայն նորա ոգևորութեան մի քանի ճիմունքները՝ սէրը գէպի Սեղան, գէպի մարմնականը, գէպի գրսի աշխարհը և մարդիկ, յուղալի կեանքը. այնպիսի պայմաններ են, որոնցից հնարաւոր է եղակացնելու, որ նրա մէջ հասարակական գծեր անպայման պէտք է գոյութիւն ունենային կամ թէ կեանքի հենց առաջին քայլի մէջ արթնանային: Քանի որ նա աշխարհում շատ «գուեր» է ընդունում և նըանցից շատ-շատերին սիրում, ուստի և ակամայից ճանաչելով ուրիշների իրաւունքները՝ պէտք է իր հոգում տեղ տար այլասիրական գգացումներին և ըմբռումներին: Լաւ կլինէր, եթէ Արեղայի այդ կողմը պիեսայի մէջ աւելի շեշտուած և պարզաբանուած լինէր:

Պիեսայի այս երկու տիպերը իրենց աշխարհանայեացքի խնդրում լիակատար չեն, այլ միակողմանի են: Նըանցից ամէն մէկը իր մտքի և ընաւորութեան որոշ կողմովը գրաւիչ է և ոչ իր բնոյթի ամբողջութեամբ: Այդ երկու հերոսների մտքերի բաղխումները թոյլ են պատկերացրած, դրամատիզմը սաստիկ չէր ուստի և շատ խորը չեն ազգում ընթերցողի վրայ մանաւանդ բաղիւ ման տեսարաններում:

Շանթը մեր դրականութեան առաջ շատ կարեոր հարցեր է պիեր, սակայն այդ մտքերի ներքին հիւսուածքները, սիստեմի կառուցուածքը, մարդկային կեանքի որոշ կողմի տենչանքների յաշջողակ և մշտական իդէալական սիմբոլը դեռ չի կարողացել տալ: «Հին Աստուածներ» դրաման իսկական Աստուածներ գտնելու նախադուուն է ներկայացնում այժմ:

Մեր դրականութեան մէջ վէճ բարձրացաւ նաև այն հարցի առաջիւ, թէ «Հին Աստուածներ»ի նիւթը զուտ պատմական. հայկական թէ ընդհանուր մարդկային է: Մեր բանասէրներից մէկի տուած բացատրութիւններից երկում է, որ Շանթը իր պիեսայի կմախ-

ը մեր պատմութիւնից է վերցրել, սակայն այդ բացատրութիւններն անգամ ինձ չհամոզեցին, որ այդ պիեսան զուտ հայկական ըոյցը ունի:

Մի պիեսայի նիւթ կարող է հայոց պատմութիւնից վերցուած լինել, սակայն այնպէս մշակուել վարպետ գրչի տակ, որ իր տեղական գոյնը միանդամայն կորցնէ և ընդհանուր մարդկային զառնայ: Մի պիեսայի կմախք շատ յաճախ այնքան քիչ նեղ ազգային և տեղական գոյն ունի, որ հեղինակը երբ այդ կմախքին կերպարանք է տալիս, նա կորցնում է իր ազգային ընոյթը և հասարակութեան մէջ այն հաւատը յառաջացնում, որ այդ գէպքը իր ամբողջութեամբ կարող էր պատահել ամեն մի կուլտուրական հասարակութեան մէջ: Շանթի Հին Աստուածները այդ բնաւորութիւնն ունի, տիպերը, գէպքերը, զործողութիւնները, հոգեկան ներքին ապրումները և ընդհարումները այնպէս է պատկերացրած, որ այդ բոլորի ենելը տեսնում էք առհասարակ կուլտուրական մարդուն և ոչ թէ մասնաւորապէս որ և է գարու մի հայ մարդու: Ամեն մի կուլտուրական երկրի պատմութեան և ներկայի մէջ կարող էք պատահել թէ այդ պիեսայի հիմնական խնդրի արծարծմանը և թէ տիպերի այդ գունաւորմանը: Հին Աստուածների մէջ չկան հայկական կեանքի այն տուանձնայատկութիւնները, որոնք գոյութիւն ունին օրինակ Շիրվանզագէի գրամանիրում:

Շանթի պիեսայի ընթերցանութեան ժամանակ ես գոնէ մըտքով վերապրում էի իտալական վերածնութեան դարը, երբ կուլտուրայի պատմութեան մէջ բացառիկ առանձնայատկութեամբ մարմինը, զգայալանականը, արտաքին գեղեցկութիւնը, ազատ տնհատը և միջնադարեան ճգնական և աշխարհամներժ կարծիքները ուժեղ թափով իրար էին բաղիւում և յուղում ժամանակի հասարակութիւնը: Հոգեկան գանազան կողմերի և կարիքների բաղիւմների մասն այն ձեր, որը պատկերացրած է «Հին Աստուածների» մէջ, ուելիքն կերպով տեղի է ունեցել վերածնութեան դարում և մանաւանդ իտալիայում:

Յունական հին կուլտուրան զգայական, մարմնական, էսթետիկական էր իր էութեան մէջ և ընդհանրապէս այդ ուղղութեամբ ամբողջական, միջին դարունը ընդհակառակն ճգնական, մարմինը, ընութիւնը արհամարհող, հոգին գէպի անդրբնականը դարձնող, արտաքին ու զուտ աշխարհիկ արծէքները մերժող էր. միջին դարերն ես այդ ուղղութեան մէջ ամբողջական էին: Վերածնութեան բարու մէջ յունական և միջնադարեան տեսակէտները և արժէքացար իրար հետ են ընդհարուում ուժգնորին: Յունական դարում Արեղաներ կային, միջին դարում վանահայրներ, իսկ վերածնու-

թեան դարում երկուսն էլ իրար հետ բաղխուելիս:

Աւելի պարզելու մեր ասածների ճշտութիւնը բերենք միքանի կուլտուրական պատկերներ, ընթերցողին համոզելու, որ Շանթը սիրուն կերպով պատկերացնել է այդ դարերի կուլտուրական ծրագիրները: Գեղարուեստի յայտնի պատմագէտ Մուտերը հետեւել կերպ է համեմատում յունական շրջանը և միջին դարերը: «Քրիստոնէութիւնը միջին դարերում ճգնական, ուրախագուրկ կրօն էր դարձել: Հին յունական կուլտուրան պայծառ էր, մի մեծ օրհներգ էր գեղեցկութեան համար, մի հպարտ ինքնապումն էր: Մարդը իր Աստուածները իր բնոյթի պէս էր ստեղծում: Աւելի սուրբ բան չկար, քան սէրը, աւելի աստուածային, քան գեղեցկութիւնը: Այս ուրախ, զգայագո՞ն կրօնից վերածեց հելլէնական գեղարուեստը, այն առողջ, յաւիտենապէս ժպտում գեղարուեստը, որը ամեն մի հիւանդագին ցանկասիրութիւնից ազատ՝ գեղեցկութեան և զգայականի յաղթանակն էր ազգարարում աշխարհին:

Այլ է պատկերը միջին դարերում: Այս աշխարհային կրօնին, որը վարդապետում էր ապրել, յաջորդեց անդրաշխարհային կրօնը, որը ասում էր, որքան կարիքապուրկ մարդը իր աշխարհային կեանքը ձեակերպէ, այնքան աւելի մեծ իրաւունք ունի երկնային երանութեան հեամար: Զգայարանքների զուարթ պաշտամունքից և հպարտ իշխողների մորալի (Hemoral) տեղը բոնեց բնագիների յանցաւորութիւնը և ստրկական խոնարհութիւնը: Միայն ճգնութիւնը և ապաշխարանքը, միայն մարմնի ներփենու նման սպառումը կարող էին երկնքի ճանապարհները բանալ:

Ահա ձեզ և Շանթի պիհսայի ծրագիրը. ինչ էր ըստ վերոշիշեալի միջին դարը. «ճգնական», «ուրախագուրկ», «անդրաշխարհային», «կարիքապուրկ», «բնագիները յանցալի», «խոնարհութիւնը», «ճգնութիւնը» և «ապաշխարանքը» էական արժեքներ, այսինքն հաւասար է Շանթի Վանահօրը:

Իսկ ինչ էր հին դարը. «ճպարտ ինքնապումն», «գեղեցկութեան և սիրոյ օրհներգ», «զգայագո՞ն», «ժպտում» և «պայծառ գեղարուեստ», «զգայարանքների յաղթութիւն». այսինքն՝ հաւասար է Շանթի Արեղային: Շանթը նոր պատկերների մէջ ձեակերպել է գեղարուեստական կերպով վերև բերած ցիտատի իմաւալը:

Բայց Շանթը պատկերացնում է երկու հայեացքների կոիւը, որը այդ ձեռով տեղի է ունեցել իսկապէս իտալիայում, ուր մի կողմից զգայականը, գեղեցիկը, մարմնականը և բնականը, իսկ միւս կողմից հին միջնադարեան կարծիքներ իրար էին հանդիպում և իրար դէմ պայքարում: Մի փոքրիկ պատկեր այդ դարուց

Ֆլորենցիան հումանիզմի կենդրոնատեղին էր, իսկ Մեղիչների տոհմը նոր ոգու կենդանի պահողը: Լորենցո Մեղիչին մի նույր, կիրթ ձաշակի և վարժանքների տէր մարդ էր. իր բնոյթի և էռւթեան մէջ հին յոյն: Ֆլորենցիայից գուրս գտնուող իր վիլաների մէջ ընթրիքներ, ձաշկերոյթներ էր տալիս ժամանակի զիտնականներին, գեղարուեստագէտներին, բանաստեղծներին և փիլիսոփաներին: Սրանք ապրում էին բաւարարելով բոլոր զգայարանքների պահանջներին. իրենց հոգիները լցնում էին գեղեցկութեան և բաւականութեան գրգիներով. տպեղը, անդրբնականը, կենսամերժ կարծիքները, տրամադրութիւնները արտաքսուած էին Լօրենցոի ուրախութիւններով և հաճոյքներով լի վիլաներից: Երգուում էին նաև նրա հեղինակած երգերից հանդէսների և կարմավալների ժամանակի: Նրա երգերից մի փոքրիկ օրինակ:

«Որքան գեղեցիկ է երիտասարդութիւնը, նա փախչում է սակայն: Ավ ուզում է բախստաւոր լինել թող լինի իսկոյն: Վաղուայ գալիքը անյալու է:»

Տիկիններ և երիտասարդ սիրահարներ, կեցցէ Բաքոսը, կեցցէ սէրը: Իւրաքանչիւրը թող նուագէ, պարէ ու երգէ, որպէսզի սիրոյ հաճոյքը նրա սիրաը բոցավառէ:

«Յաւն ու հոգուը պէտք է զինաթափ լինին: Ավ ուզում է բախստաւոր լինել, թող լինի այժմ: Վաղուայ գալիքը անյալու է:»

Որքան գեղեցիկ է երիտասարդութիւնը. նա փախչում է սակայն:»

Ահա ձեզ այն կեանքը, որը երազում էր Արեղան: Բայց ահա գորա կողքին նաև մի այլ կեանքը, որը այլ կողմից գալով՝ բաղխուում էր այդ ուրախ կեանքի հետ և նրա մէջ մի փոքր դամնութիւն մացնում: Այն ժամանակ, երբ Լօրենցո Մեղիչու վիլաների մէջ զգայարանքների յաղթանակն էր երգում, հենց այդ ժամանակները նոյն Ֆլորենցիայի եկեղեցիներից մէկի ամբիոնից՝ գունատ, գալիքացած, նեարդու վանական Սալանարուան էր իր կրակու, կրծանիչ և աղաղակող քարոզները կարգում ժամանակի զգայական կեանքը և նրա ներկայացուցիչ Մեղիչու դէմ: Սաւանարուան քարկոծում էր իր ժամանակի զգայական բոլոր երեսթները կուլտուրական-աշխարհիկ բոլոր արժեքները, զգայարանքները խտացնող և բնութեան արտաքին փայլի մէջ արգեցած նկարիչների գործերը և մեղքի մէջ տառապող մարդկութեան կոչ անում գէպի «ապաշխարութիւնը», «ներքին մաքրումը», «մարմնականի ճնշումը» և աստուածային տրամադրութիւնները:

Սաւանարուան, որոշ կողմից Շանթի Վանահօր նախատիպնը, մի ամբողջ հոսանք յառաջացրեց Ֆլորենցիայի կեանքը մէջ, առաջ, որ փողոցներում կառնաւալների երգերն էին հնչում, այժմ լուսում

էր Սաւանաբոլայի հետևողների կրօնական երգերը: Խարոյիներ էին պատրաստում և այրում այն ինչ վերաբերում էր աշխարհիկ կուլտուրային:

Ահա կուլտուրական ուժեղ պատկերներ, որոնք կարող էին աւելի հիմք ծառայել Շանթի երկի ստեղծագործմանը, քան հայոց պատմագիրներից հանած մի քանի կցկութիւններ, որոնք պիեսայի արժանիքի համար համարեա ոչ մի առանձին արժէք չունին:

Շանթի պիեսայի նիւթը աւելի քան հայկական չէ. նա իսկական իմաստով ընդհանուր մարդկային է: Այդ նիւթով կարող է հետաքրքրուել կուլտուրական ցեղերին պատկանող ամեն մի անհատ:

Այս երկը ընդհանուր մարդկային է ոչ միայն այն պատճառով, որ նիւթը եւրոպական բնոյթ ունի, այլ նաև այն հիմամբ, որ նրա առանցքը կազմող իդէան զուտ մարդկային է և ժամանակակից:

Այս պիեսայի մէջ հոգեկան կեանքի երկու կողմերի պահանջների կուլտն է արտայայտած. հոգին մի կողմից իր իշխանութիւնը տարածում է դէպի արտաքին բնութիւնը և իր մարմինը և նրացից ստանում ըազմազան տպաւորութիւններ. միւս կողմից նա ունի նաև չատ ներքին կարիքներ. նա կարւում է յաճախ արտաքին աշխարհից, ամփոփում է ինքը իր մէջ և այդ ներքին խորասուզումների միջոցաւ միանում է անդրբնականին վերաբերող հարցերին: Այս դէպի հոգին աշխատում է մերկանալ արտաքին աշխարհի տպաւորութիւններից. Պատմութեան մէջ շատ յաճախ են հոգու այն երկու տեսդեսցները իրար դէմ ծառացել և աշխատել միակողմանիութիւնների հասնելով իրար ոչնչացնել կամ չեզոքացնել: Բայց միթէ միայն հասարակական խաւերի մէջ, միթէ ամեն մի գիտակից անհատ իր մէջ չի ունեցել հոգու այդ երկու մասերի կախը. որքան յաճախ անհատը հարկադրուած է լինում ճնշել ոչնչացնել իր մէջ յառաջացող վայրկեանական մտածումները, գրգիւները, ընադիները, որքան յաճախ մարդիկ զո՞ն են գնացել իրենց ներքին կեանքի այդ անհաւասարակութիւնից: Այս ընդհանուր մարդկային միակողմանիութիւնների կուլտն է պատկերացրած Շանթի դրամայի մէջ. կոռու այդ ձեր, թւում է, յաւիտենական է կուլտուրական կեանքի համար: Այդ ինդիրը կապուած է նաև զանազան տարիքների հոգեբանութեան հետ. երիտասարդները ընդհանրապէս հակուած են լինում դէպի Աբեղան, ատարիքաւորները և ծերերը դէպի Վանահայրը:

Այս զբաման ոչ միայն այն պատճառով է ժամանակակից հայերին համար, որ առհասարակ մարդկային բնոյթի հետ կապ-

ուած ինդիրներ է շօշափում, այլ նաև մեր ներկայ հասարակութեան հոգեկան մակարդակի առանձնայատկութեան պատճառով: Ուրիշ ժողովրդների վերածնութիւնը տեղի է ունեցել հինգվեց դար առաջ, իսկ մերը միայն 19-րդ դարում: Մինչև այս շըրջանը մեր մտածելակերպը շատ չի տարբերուել մեր միջին դարու գործիչներից, մենք մինչև այդ շրջանը կրթուել ենք միմայն Նարեկացու, վարք սրբոցի, մեր միջնադարեան կրօնա-փիլիսոփայական մտածողների գրուածքների վրայ: Յունականի թոյլ հետքերը մեր երկիրն է եկել 19-րդ դարում եւրոպական կուլտուրայի կիսախնդիրթերուած կերպարանքի տակ: Ներկայի մեր հին սերունդը հանդիսատես է եղել այդ պայքարին և նոյն իսկ մասնակցութիւն ունեցել Նոր սերունդը գեռ անցման շրջանի մէջ է իր բարոյական, գեղարուեստական, փիլիսոփայական և կեանքի հետ կապուած այլ խնդիրների վերաբերմամբ: Մենք տապակում ենք նոր և հին կուլտուրանիւրի հայեացքների մէջ, մենք ոչ զուտ աշխարհիկ ենք, ոչ զուտ միջնադարեան. ոչ զգայական և ոչ էլ խորն ներքին կեանքական: Մեր և հասարակական շերտերի մէջ գեռ իրար դէմ են պայքարում այդ երկու մեծ կուլտուրաների հետքերը: Արեղան, իսկ աւելի քիչ չափով Վանահայրը գեռ այսօր էլ կան, գեռ կենդանի են, գեռ կողմնակիցներ են որոնում:

Հին Աստուածները զուտ պատճական նիւթ չէ շօշափում. թէ վանահօր տիպը մեղ համար աւելի է հասկանալի դառնում անցեալ կեանքի վերյիշման միջոցաւ, սակայն պիեսայի մէջ արծարծուած ինդիրների վերջնական լուսաբանման համար է աշխատում մեր ներկայի կուլտուրական կեանքը:

* * *

Շանթի այս գրամայի յաջողութեան պատճառները և գնահատման խնդիրը զանազան բացատրութիւնների տեղիք տուին:

Այս պիեսայի հանած աղմուկի պատճառները մի քանիսն են: Հիմնական պատճառներից մէկն է պիեսայի ժամանակակից խնդիրներ արծարծելու հանգամանքը: Ամեն մի գեղարուեստական երկից պահանջւում է, որ նա որ և է կերպ խօսէ անհատի հետ, զգացումներ, մտքեր արթնացնէ նրա մէջ: Լսողը կամ կարգողը պէտք է իր հոգու մասերը տեսնէ պիեսայի մէջ առարկացուած: Հին Աստուածների մէջ այդպիսի յարաբերութեան ստեղծման հանգամանքներ շատ կան: Այստեղ քննուող հարցերից շատ շատերը մենք ապրել ենք, նոյն շուրջը ուրախացել կամ դիմումներ են առարկացած: Եթէ պիեսայի և լսող կամ կարգացող

հասարակութեան մէջ անկեղծ և անմիջական կապ է ստեղծւում, նշանակում է պիեսան գեղարուեստական երկից անուելիք պահանջներից մէկին արդէն բաւարարութիւն է տալիս:

Հին Աստուածները հասարակութեան ուշադրութիւնը իր վրայ գրաւեց նաև թատերական գրուածքի մեր մօտ քիչ տարածուած ձեփ իշրառման պատճառով: Մարդու հողին մշտապէս թարմութիւն, նորութիւն է ցանկանում, երկար ժամանակ տեսդ գրգիռները բթացնում են նրան և ձանձրոյթ պատճառում: Միւս նոյն դրութիւնը գոյութիւն ունի նաև հասարակութեան մէջ, որը նոյնպէս երեխայի պէս գէպի նորութիւնն է ձգուում: Շանթի պիեսան ունի ամենամեծ յարմարութիւնը այդ ուղղութեամբ ազգական գրամաների ներկայացմանը, սովորական կեանք, սովորական դրամաներ: Այժմ նրա առաջն է դրուում մեր կեանքի հարցերի նոր ձևակերպումներ, նոր պատկերներ, նոր էֆեկտներ: Ամբողջ փայլը մեծանում է և զգայարանքները հաճոյք են ստանում աւելի, ուրեմն և հասարակութեան մղումը գէպի այդ պիեսան միանգամայն հասկանալի է դառնուում:

Այսպիսի հիմունքները մի գեղարուեստական երկի յաջողութեան համար շատ էլ յանձնարարելի չեն, որովհետեւ ներքին զուտ գեղարուեստական արժանիքներով նա պէտք է ազգէ ամեն մէկի վրայ և ոչ արտաքին նորաձեռնութիւններով: Եթէ Հին Աստուածների աղդեցութեան գաղտնիքը այս վերջին տեսակի արժէքները լինէին, այն գէպքում այդ երկը մեր գեղարուեստական գրականութեան մէջ մի շատ չնչին տեղ պէտք է բռնէր: Սակայն վստահօրէն կարելի է պնդել, որ այդ գրուածքի մէջ կան զուտ գեղարուեստական այնպիսի յատկանիշներ, որով նա, ինչքան էլ թերութիւններ ունենայ, անհրաժեշտօրէն աղդել կարող է ամեն մի գեղարուեստական պահանջներ և ճաշակ ունեցող մարդու վրայ:

Ամեն մի գեղարուեստական երկից պահանջւում է, որ գաղափարների ծանրութեան տակ չծալուէ: Գաղափարայինը սպանում է գեղարուեստականը, տարածուած մի կարծիք է սա, որը իր մէջ պարունակում է խորին ճշմարտութիւն: Գաղափարները զգայական տուելներից բարձրանում են գէպի վերացականը, կուկրեալ պատկերները չքանում են և նրանց տեղը բռնում են մերկութեան մօտեցող բառերը: Գաղափարները մեզ տալիս են իմացութիւններ և նոցա սիստեմատիզացիա, սակայն չեն տալիս զգայական, գունեղ, մտքի հաճոյական պատկերներ, այդ պատճառով էլ զաղափարների հետեւանքները չեն տալիս զգացումներ: Գեղարուեստի մէջ ընդհակառակն էական գործօնն է զգացումք: Եթէ գեղարուեստական մի երկի մէջ զաղափարները սկսեցին միծ

անդ բռնել, նշանակում է այդ երկը աւելի գիտական գրուածքի մօտենում, քան գեղարուեստական: Գաղափարները և իշխական մասերը պէտք է այնպէս շաղկապուած լինեն զգայական—կոնկրետ պատկերների հետ, որ ընթերցողը չզգայ, թէ ինքը ինչպէս է ընդունում հեղինակի գաղափարները այդ սիրուն և հաճելի շըրջապատի մէջ: Զգայական պատկերների, երևակայութեան շինուածքների և դոցա ներգաշնակելու մէջ պէտք է երեայ իսկական գեղարուեստագէտի հոգու թափի ուժը: Շանթը այս կողմից յաջողակ գրող է: Նրա գրուածքը ոչ միայն աղքատ չէ, այլ նոյն իսկ հարուստ է մտքերով, սակայն այդ մտքերը այնպէս է շերտաւորել զգայական սիրուն պատկերների և նմանութիւնների մէջ, որ ընթերցողը շատ դիւրին և հաճելի եղանակով ընդունում է այդ բոլորը առանց մի վայրկեան անգամ զգալու, թէ մտքի տեսակեալից որ և է ծանր խնդրի հետ գործ ունի: Մտքերը քաղցր նեկտարի պէս հալուում են ընթերցողի հոգում: այդպիսի տեղեր լինքն են Հին Աստուածների մէջ: օր երբ Սրեղան սէրը, յաղթանակը, մարմինն է երգում, կամ Վանահայրը իր նոր եկեղեցու մասին է Էստուզիազմի մէջ խօսում:

Ոչ միայն գաղափարները, այլ և ամենահասարակ գատողութիւնները, խօսակցութիւնները, ներքին կեանքի վիճակները սիրուն պատկերների մէջ են արտայայտուած: այդ պատկերները երբեմն ուժի, երբեմն մեղմութեան, երբեմն յուսահատութեան, երազականի և այլ վիճակների արտայայտութեան համար են ծառայում: մեծ մտսամբ պատկերները հասնում են իրենց բուն նպատակին: Այդ բոլորի նպատակն այն է, որ ընթերցողը իր հոգու մէջ այդ պատկերների օգնութեամբ պարզ կամ խաւար զգացումներ կամ զգացումակերպ տրամադրութիւններ արթնացնէ: Զգացումները կախուած են մասպատկերներից, որպէս զիւնթերցողը գեղարուեստական բռն վիճակին, այն է զգացումների վայելմանը հասնէ, հեղինակը, որի ձևոքին միայն բառեր կան, պէտք է այդ բառերից այնպիսի կառուցուածք ստեղծէ, որ նրանց յաջորդմանը և յարաբերմանը յաջորդեն կամ ընթացակից լինեն զգացումներ: Զգացումների ճանապարհը մտապատկերների վրայից է տեղի ունենում գեղարուեստի բոլոր ճիւղերի մէջ: Շանթի յից է տեղի ունենում գեղարուեստի բոլոր ճիւղերի մէջ: Զանթի կողմի վրայ, մտապատկերները պէտք է գունաւորուեն զգացումներ և կերպ և վերջ ի վերջոյ ձգտեն նոցա յառաջացման և արտայայտուածքներից մէկն է:

Գեղարուեստական երկի վերջնական նպատակն է զգացումներ արթնացնելը: Գեղարուեստականութիւնը էապէս հիմնուում է այդ կողմի վրայ, մտապատկերները պէտք է գունաւորուեն զգացումներ և կերպ ի վերջ ի վերջոյ ձգտեն նոցա յառաջացման և արտայայտուածքներից մէկն է:

մանը: Եթէ հեղինակին չի յաջողւում զգացումներ ծնեցնել ընթերցողի կամ լսողի մէջ, նշանակում է նրան չի յաջողւել դրել գեղարուեստական գործ: Շանթը այդ կողմից շատ զնահատելի գորդ է, սիրոյ, յուսահատութեան, ներքին անհանգստութեան, գեղեցկութեան, կեանքի արբեցումին վերաբերող զգացումները արտայայտում է մնձ վարպետութեամբ: Դուք տեսնում էք ձեր հոգու առաջից անցնում են բազմտիւ պատկերներ, և այդ պատկերների հետ գործող անձինք, տեսնում էք, թէ նրանք ինչպէս են սարսափում (սատանաներին վերաբերող տեսարանը), ինչպէս են ուրախանում (Սեղային տեսնելիս), ինչպէս են տանջւում (Մարիամի հշանականում շրջանում), ինչպէս են իրենց իշխում և խեղզում իրենց մէջ աշխարհային նուրբ զգացումները (Վանահայրը), ինչպէս են իդէական ծրագրներ պարզում և խորը էնտուպիազմի մէջ ընկնում (Վանահայրը), թէ ինչպէս են խեղարի պէս սիրում արտաքին բնութեան գեղեցկութիւնը և այն և այն: Զանազան կեանքեր, բոլորն էլ իրենց ձակատագրից մղուած, իրենց հոգու կեանքում ապրում են և զգում իրենց ներքինը և շրջապատը: Սակայն ոչ միայն այդ, այլ և ընթերցողը իր մէջ էլ ապրում այդ զգացումները: Գեղարուեստականն այն դէպօւմ է իր լիտկատար ծաղկմանը հասած, երբ նա կարողանում է իր հետ քաշել, տանել լսողին, տեսնողին կամ կարդացողին: Պէտք է ապրել հերոսների հոգու կեանքի վիճակները, պէտք է մասնակից լինել նրանց գրութեանը իր հոգու մէջ նման վիճակները նրբօրէն վերապրելով: Տեղ-տեղ Շանթի հերոսները ընթերցողի հոգին լցնում են այդպիսի զգացումներով: Արեղան տանջւում է, կասկածը, թերահաւատութիւնը ընկել է նրա հոգու մէջ. չէ կարողանում ոչ ինը և ոչ էլ նոր տրամադրութիւնների ետեւից զնալ: Տապակում է անորոշութեան և մտքերի հալածանքների մէջ: Երբ կոյր Վանականը դարձի է հրաւիրում նրան, ընկնում է խաչի առաջ և դառնագին ողբում:

«Ես կորսուած մեղաւոր մըն եմ, փրկէ ինծի, տէր. ևս ինկած յանցաւոր մըն եմ, օգնէ ինծի, տէր. մեղքի մէջ խեղզւող մըն եմ, բոնէ ձեռքս, տէր: Տես, մեղքի ծովուն մէջ... մեղքի ծովուն մէջ... ծովուն... ծովուն...»

Այս բառերի մէջ ընթերցողը զգում է Արեղայի անկեղծ ցաւը, տանջանքը, հոգու ճնշուածութիւնը:

Մի այլ տեղ հոգու այդ զինաթափ, անկայուն անհաստատ վիճակը հետեւալ կերպ է պատկերացրած.

«Տեւը ինծի իմ հանգիստս, տեւը ինծի իմ աղօթքներս, տեւը իմ վատահութիւնս ըրածիս, կեանքիս, ուժիս: Ամեն, ամեն ինչ կըփլի շուրջու»: «Ալ չկայ ինծի հանգիստ ոչ խուցիս մինութեանը

մէջ, ոչ դուրսը, ոչ եկեղեցին կամարներուն տակը: Սաղմոներուն մէջէն քո ձայնդ կըլսիմ, մութ կամարներուն տակէն քու աչքերդ ինծի կըժպատին, խունկի հոտին մէջէն քո թաց մազերուդ բոյրը կըզգամ...: Ինչու, ինչու կըտանջնա ինծի»:

Զգում ես այս տաղերի մէջ երիտասարդ սրափ մելանխոլիկ սիրոյ ձայները: Շուրջը ամեն, ամեն բան քայլքայւում է և ամեն տեղ իր սիրածի պատկերն է տեսնում: Աշխարհը մի մնձ Սեղա է դարձել: Արեղան լնթերցողին վարպետում է իր տրամադրութեամբ, իր յոյզերով, իր զգացումներով և յուսահատ և անօդնական աղաղակներով:

Մի այլ տեղ, երբ հարկաւոր է պատկերացնել Արեղայի յուղական, թափուա, ամեն բան մոռացութեան տուող և ամեն մի զիջումի պատրաստ սիրոյ զգացումը, հետեւեալ տաք և կրակոտ խօսքերն է դրում Արեղայի բերանում:

«Օ, գուն, զուն իմ էութեանս հմայքը, զուն թաղուհին իմ մտքերուս. զուն իմ սրափս ծնվը, զուն փոթորիկը իմ հոգիիս: Արևուն հուրքն ես զուն, ծնվերուն յոյզքն ես զուն, բնութեան պարզին ես զու ինծի: Թող, թող փաթթուիմ ստքերուզ, թող համբուրիմ կոխած հոգդ. համբուրիմ այդ ձերմակ հագուստիդ փէշերը ...»:

Միթէ ունինք իրաւունք ձերմակ, թրթուն, երազուա սիրոյ զգացումը աւելի գեղեցիկ բառերի մէջ զնելու պահանջը անհետինակից: Հէնց միմիայն այս բառերը բաւական են Արեղայի սրտի ծովի մտսին պատկերացում կազմելու և վերգգալու մեր մէջ նրա սրափ ներքին թրթիւնները: Այսպիսի կաորներ շատ կան այս գրուածքի մէջ: Այդ բոլորը իրար հետ միախառնուելով տաշիս են երկին զուա գեղարուեստական առաջնորդուելով իր բնազդական գեղարուեստական պահանջներից՝ ոգերուէ այդ պիեսայով:

Ամեն մի ընթերցող, ամեն մի թատրոն յաճախող պահանջում է գեղարուեստական երկից մտքի համար կերակուր, երեակայութեան համար սիրուն պատկերներ և սրափ համար զգացմունքների աղբիւրներ: Այս երեք պահանջներին էլ որոշ չափով բաւարարութիւն է տալիս Շանթի երկը:

Շանթը երաժիշտ էլ է. բայց երաժիշտ լեզուական նշանների, ոչ նոտանների: Ամեն մի գեղարուեստական գրուածք ազդելու երկու ճանապարհներ ունի. մէկ ազդում էնա ըստ բովանդակութեան և մէկ էլ ըստ արտաքին կաղապարի: Կամ այլ խօսքով ասած բառերով: Երբ լսում ենք մի բանաստեղծութիւն, պէտք է, եթէ լաւ գրուածք է, մեր հոգու մէջ պարզ պատկերացնենք նրա մէջ արտայայտած իմացական դրութիւնները և ապրենք պարու-

Նակած զգացումները: Սա գեղարուեստական ճաշակման մի կողմն է, երբ բովանդակութիւնը, մտքի ամրողացումն է զեր խաղում: Սակայն բանաստեղծութիւն կարդալիս բառերը, սիրուն, իրար հետ ներդաշնակուած ու յարմարօրէն հիւսուած բառերն ևս աղջում են իրանց երաժշտական ելեէջներով և այդպիսով բարձրացնում գրուածքի գեղարուեստական արժեքը: Բառերը բանաստեղծութեան կաղապարներն են. իսկ որպէս զի նրանք լաւ ամփոփեն իրենց յայտնելիք բովանդակութիւնները, պէտք է յարմար լինեն բովանդակութեան ոգուն և առանձնայատկութեանը: Շատ յաճախ է պատահում, մանաւանդ մեր զբականութեան մէջ, երբ հեղինակը չի կարողանում բառերը, արտաքինը և ներքինը ներդաշնակօրէն արտայայտել և իրար հետ շաղկապել, ուստի հեղինակը կամ ըստ ձեմի լաւ է և վատ ըստ ներքին բովանդակութեան և նիւթի և կամ լինում է ըստ բովանդակութեան հարուստ, սակայն չի կարողանում այդ բոլորը գեղեցիկ ձեերի մէջ ձուլել: Շանթը մեր գրականութեան այն վարպետներիցն է, որը այդպիսի միակողմանիութիւններից ազատ՝ բովանդակութիւնը և ձեւ միացնում է իրար ներդաշնակօրէն: Կանոր խորը յափշտակութեամբ կարդացած Ռուսօի գրուածքների լեզուի մասին հետևեան էր գրում. «Ես պէտք է Ռուսօն այնքան կարգամ, մինչև որ լեզուի գեղեցիութիւնը ինձ էլ չխանդարէ, որպէս զի կարողանամ այնուշետեւ միայն բանականութեամբ քննել»: Նման մի վտանգ գոյութիւն ունի նաև Շանթի գրուածքի մէջ: Նրա լեզուն շատ է գրաւիչ. քաշում, տանում է ընթերցողին իր հետ: Ոչ միայն ձեական գեղեցիութիւնի, այլ և յարմարում է նաև բովանդակութեան: Նիւթի թեթև, ուժեղ, մելամաղձիկ, երազական, ջերմ և այլ տպաւորութիւններ արտայայտելու գէպքում Շանթը կարողանում է վարժեթիւններ համապատասխան բառեր և դարձուածքներ զտնել և պետօրէն համապատասխան բառեր և դարձուածքներ զտնել և ներդաշնակօրէն իրար հետ կցել. այդպիսով ստացւում է լեզուի երաժշտութիւն:

Փոքր ինչ վերև մի քանի կտորներ բերինք զգացումների վառվառութիւնը ցոյց տալու համար, բայց նրանք կարող էին նաև լեզուի քաղցրութեան օրինակներ ծառայել: Բայց բերինք մի քանի կտորներ ևս:

Եւխան—(եղջիւրը առած կերթա բագնին առջելը ու զինին վեր բարձրացնելով) Քեզի, ով վեհդ դիցուհի, ով փրփրածինդ Աստղիկ, դռւն որ անարատ ես ու սքանչելի, քու ելած փրփուրիդ նման. դռւն վերին գեղեցկութիւն, դռւն գերագոյն հմայք ու քընչը քշութիւն, քու տուած լոյսիդ նման. դռւն որ աղբիւրն ես սիրու, յոյսերու ու յուզումներու, քեզի օրօրող ալիքներուն նման. քեզի, ծովածին, քեզի կը նուիրեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը աղնիւ ու

արբեցնող գինիով, դռւն, որ գեղեցկութեան ու սիրու վայելքը, հեշտանքը ու արբեցումը կու տաս մեզի: Ընդունէ, դիցուհի, իմ ձօնս»:

Թեթև, քնքոյշ ծփանքով տպաւորութիւնները հետևեալ բառերի մէջ է արտայայտում.

Անուշ քուրիկ, կամ Սէրը սիրով

Փրփուրիկ, Սէրը սիրով

Հատ մը, հատ մը Օրէնքն աս է

Համբուրիկ Դարերով:

Ալիքների շարժումը, ելեջը, իրար վաթաթուելը հետևեալ կերպ է արտայայտում.

Զանազան ալիքներ—(Բէրնէ բերան ու ընդհատ-ընդհատ)

—Պիտի կորչիս:

—Տեղ տուր լանջիս:

—Քարին փակչիս:

—Ա՛յ, հասանք, հասանք:

—Հոսանք, հոսանք:

—Ի՞նչ վազեր ենք ափէ ափի:

—Ի՞նչ ցատկեր ենք չափէ չափի:

—Չափ. Ի՞նչ չափի:

—Անչափ, անչափի:

—Չափ, չափի:

—Սա թռչիլ է, վազել չէ:

—Սա եռալ է, ցատկել չէ:

—Կեցիր, կեցիր ու կանչէ:

—Չէ, չէ, անցիր, աս ան չէ:

—Ա՞ն է:

—Ա՞ն չէ:

—Է՛, մէկ չէ:

—Կանչէ, կանչէ:

—Մէնք պարապ չենք:

—Ոչինչ, կանչենք:

—Կանչենք:

—Կանչենք:

—(Միաբերան)

Հէյ, ականջէ:

Յոյզ ու տենչ է ամեն լանջէ,

կը շառաչէ:

Քեզի ծնված է, որ կանչէ,

Հէյ ականջ է:

Եւ այսպէս շարունակ:

Կարժող է պատահել, որ հեղինակը այս տողերը գրելուց աշուած երկար, շատ երկար պառկած չլինէր ծովի ափին և լսած ալիքների չարաճնի խաղերը: Այսպիսի գոհարներով լիքն են «Հին Աստուածները»: Հին Աստուածների հմայքը բարձրացնելու խընդումը Շանթի երգող լեզուն շատ մեծ դեր է խաղում:

Այսպիսով աեսնում ենք՝ Հին Աստուածների նիւթի այրող ժամանակից լինելը, նիւթի ծեակերպման համեմատական նորութիւնը, գաղափարների յաջողակ լուծումը պատկերների հետ, յաջողակ պատկերացումները, զգացումների անկեղծութիւնը և լեզուի երաժշտականութիւնը այն հիմունքներն են, որոնք առիթ գառնալով մոռացութեան տալու պիհացի մէջ եղող պակասութիւնները՝ դարձնում են նրան զրաւիչ և գեղեցիկ: Շանթի երկը համաշխարհային գրականութեան համար առանձին նշանակութիւն չունի, որովհետև այդ երկի մէջ պակասում են հոգեկան կեանքի գարգացած և հասունացած դրամատիկ պատկերները, նոյնպէս և մտքերի և աշխարհահայեացքի ուժեղութիւնը և խորութիւնը: Շանթը նուրբ է, բայց խորը չէ: Խոկական զրական մեծութեան համար նրան պակասում են հոգու ուժը և բազմակերպութիւնը: Բայց Հին Աստուածները հայոց գրականութեան լաւագոյն գործերից մէկը պէտք է համարել:

Հին Աստուածների ընթերցանութիւնից յետոյ գալիս է մարդ այն եղբակացութեան, որ Շանթին յաջողում է երգել յատկապէս մեղմը, նուրբ գեղեցիկը, ոլորուն երազականը, թըթրուն զրաւիչը, ձնշուած ցաւը, զգայառատ հիացումը, աշխարհիկ երազկոտ սէրը, բնութեան պաշտամունքը, վայելքի հմայքը, կեանքի գերբնացած վեհութիւնը: Կոշտը, կոպիտը, տգեղը, կատաղին, մոլեգին թափուը, տարրերային կրքոտը հեռու է նրա հոգուց: Ուժի և յաղթանակի երգերի մէջ նա թոյլ է, այդ նրա էութեան ճիշտ արտայայտման տեղը չէ: Երբ փորձում է ուժեղը տալ, այդ ուժը էլի էլեգանտ կերպարանքի մէջ է մանում և թափը կոտրում:



0788
1574

միւս «ՀԱՅՎՃ ՇԱՌԵՂՈՎՈՈՒՆ» է կամ վեպուն

15 կ զնկ և ԱՍԿ

ոչովիակական կամ (օր ոչովիահանկան կամ (6 վկացված նմանզեղիչ առետուզեց (8 այլանուն եմամձան առետուզեց (6 այլանուն եմամձան առետուզեց (9 այլանուն եմամձան առետուզեց (5 վկացված զվարաւ զվարաւ զվարաւ (6 զմհովց առ միաստուն զարանդարաւ (8 ձեզաշվարմակ զարանդարաւ (9 վահովուդ. 0 վկացվիալան զաֆ զ վահովուդ. վահովուդ վահովուդ (1 ձեզաշվարմակ զարանդարաւ (9 վահովուդ.

50 կան.

ՀԱՅՎՃ ՇԱՌԵՂՈՎՈՈՒՆ ՏՎԱՐԱՎՈՒՅԻ ՅԱՎԱՐԱՐՈՒՅԻ ՀԱՅՎՃ ՄԱՅՈՒՅԻ ՅԱՎԱՐԱՐՈՒՅԻ

50 կան.

Dr. G. Edelmann: Kritik der Zillerischen Formalstufentheorie

Հայութ սպուլ Հայվանի Հայութի պուլը,

մարդակայի նպակամարդակայի



NL0381165

63.663